

**ՀԱՏՈՒԿ ԾՐԱԳՐԱՅԻՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՄԻՋՈՑՈՎ ՄԱՐԴՈՒ ՄԻՄԻԿ  
ՀԱՎԱԶԴՐՈՒՄՆԵՐԻ ՀՈԳԵՔԱՆԱԿԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՓՈՐՁԱՐԱՐԱԿԱՆ  
ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ԵՎ ՀՈԳԵՔԱՆԱԿԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅԱՆ ՆԱԽՆԱԿԱՆ  
ՏՎՅԱԼՆԵՐ<sup>28</sup>**

*Ենգալիչև Վ.Ֆ., Լեոնովա Ե.Վ., Խավիլո Ա.Վ. (Կ. Է. Ցիպլովսկու անվ.  
Կալուզայի պետական համալսարան, Կալուզա, Ռուսաստան),  
valiyen@gmail.com, e.v.leonova@gmail.com, khavylo@strider.ru  
Ղազարյան Գ. Հ. (ԵՊԲՀ, Երևան, Հայաստան)  
ghazaryan.psy@gmail.com  
Ներկայացման ամս.՝ 22.07.2019  
գրախոսման ամս.՝ 25.08.2019  
տպագրության ընդունման ամս.՝ 13.09.2019*

Վերջին ժամանակներում օպերատիվ-քննչական և դատական մարմինների աշխատանքային պրակտիկայում, ըստ մարդու՝ տեսաձայնագրություններում ամրագրված վարքի, առավել պահանջված են նրա հոգեկան վիճակն ակտիվորեն տեխնոլոգիաները: Մարդու ոչ խոսքային (ոչ վերբալ) ակտիվությունը սահմանվում է մի շարք գործոններով. արտաքին խթանի, մշակույթի և ոչ խոսքային ակտիվության ընդհանուր առանձնահատկություններին զուգահեռ կարևոր դեր են խաղում հոգեբանական առանձնահատկությունները, այդ թվում՝ անձի անհատական-տիպաբանական առանձնահատկությունները, որոնք հաշվի առնելն առաջին հերթին անհրաժեշտ է հետազոտվող վարքի վերլուծության գործընթացում եզրակացությունների արդյունավետության բարձրացման համար: Գոյություն ունեն ստի ժամանակ ոչ խոսքային վարքի մեկնաբանման տարբեր մոտեցումներ՝ 1) հուզական մոտեցում, 2) բովանդակության բարդության վրա հիմնված մոտեցում, 3) վարքի վերահսկմանն առնչվող մոտեցում: Իրավական նշանակություն ունեցող իրավիճակներում մարդու վարքի հոգեբանական վերլուծության ճշգրտության բարձրացման խնդրի լուծման համար կարևոր է վերլուծել ոչ միայն հուզական հակազդումը, այլև նրա փոխկապակցվածությունը սուբյեկտիվորեն նշանակալի խթանների ճանաչողական (կոգնիտիվ) ծանրաբեռնվածության հետ:

**Հանգուցային բառեր՝** ոչ խոսքային (ոչ վերբալ) վարք, միմիկ ակտիվություն, հոգեբանական առանձնահատկություններ, խթանների ճանաչողական (կոգնիտիվ) ծանրաբեռնվածություն:

Ժամանակակից դատական հոգեբանության, ինչպես նաև իրավաբանական հոգեբանության պրակտիկայի հիմնական միտումներից մեկը ձգտումն է գտնելու

<sup>28</sup> «Հետազոտությունն իրականացվել է Ֆունդամենտալ հետազոտությունների ոռուսական հիմնադրամի աջակցությամբ, դրամաշնորհ 18-013-01045»

իրավական նշանակություն ունեցող իրավիճակում մարդու վարքի հոգեբանական վերլուծության արդյունքների հստակ հիմքեր եզրահանգումների և լուծումների համար: Փորձագիտական պրակտիկան ցույց է տալիս, որ տվյալ ոլորտում դեռևս բավական բարդ է ապահովել եզրակացությունների նման հստակություն, ինչպես ճշգրիտ գիտություններում և նրանց քրեագիտական կիրառության մեջ: Մինևույն ժամանակ խիստ ֆորմալիզացված (թեստեր, հարցաթերթիկներ, պրոյեկտիվ տեխնիկաներ, հոգեսոմատիկ մեթոդիկաներ և այլն) և քիչ ֆորմալիզացված (դիտման մեթոդ, զրույց, հարցազրույց, կոնտենտ-վերլուծություն և այլն) հոգեբանական ախտորոշիչ մեթոդների համադրումը, մասնավորապես դատահոգեբանական փորձաքննության ժամանակ, թույլ է տալիս ստանալ առավել օբյեկտիվ տեղեկություն և խուսափել ճշմարտանման, բայց ոչ ստույգ եզրահանգումներից: Այսպես, փորձաքննական զրույցի ընթացքում կարող են բացահայտվել փորձաքննվողի (հետազոտվողի) կենսագործունեության պայմաններ, որոնք թույլ են տալիս ճշգրտորեն մեկնաբանել պրոյեկտիվ մեթոդիկաների կիրառման արդյունքները, իսկ դիտման մեթոդը թույլ է տալիս ամրագրել ընթացիկ և հետազոտման ժամանակ փոփոխվող հուզմունքի, հուզական լարվածության դրսևորումները, մարդկանց, տարբեր արտահայտությունների, իրավիճակների նկատմամբ իրական վերաբերմունքը, որոնք կարևոր են եզրահանգումների հիմնավորման տեսանկյունից, և որոնք հնարավոր չէ ստանալ միայն թեստերի, հարցաթերթիկների և պրոյեկտիվ մեթոդիկաների օգնությամբ:

Ներկայումս << դատահոգեբանական փորձաքննության անցկացման մեթոդաբանության մեջ որպես ինքնուրույն ֆենոմենների և փորձաքննական առարկայի հետազոտություն առանձնացված են՝ սուբյեկտի (տուժող, վկա և այլն) պոտենցիալ ընդունակությունը և ունակությունը՝ ճիշտ ընկալելու գործի համար նշանակություն ունեցող հանգամանքները և տալու դրանց վերաբերյալ ցուցմունքներ, ինչպես նաև պարզելու այդ ֆենոմենների վրա ազդող գործոնները [1]: Օպերատիվ-որոնողական և այլ պրոցեսուալ գործողությունների ձայնագրված նյութերի կիրառումը թույլ է տալիս զգալիորեն ընդլայնել նյութերի տեղեկատվական բովանդակությունը, բարձրացնել փորձագիտական եզրակացության ճշգրտությունը ու ամբողջականությունը: Սակայն եզրակացության հուսալիության հիմնավորումը դատահոգեբանական փորձաքննությունն իրականացնելու ժամանակ չի կորցնում իր այժմեականությունը, ակտուալությունը, հատկապես այն դեպքերում, երբ փորձագետ-հոգեբանի առջև դրվում են հետազոտվող անձի հաղորդակցական (կոմունիկատիվ) վարքի հոգեբանական գնահատականի հարցերը:

Մարդու ոչ խոսքային ակտիվությունը սահմանվում է մի շարք գործոններով: Արտաքին խթանի, մշակույթի և ոչ խոսքային ակտիվության ընդհանուր առանձնահատկություններին զուգահեռ կարևոր դեր են խաղում հոգեբանական առանձնահատկությունները, այդ թվում՝ անձի անհատական - տիպաբանական առանձնահատկությունները, որոնք հաշվի առնելն առաջին հերթին անհրաժեշտ է հետազոտվող վարքի վերլուծության գործընթացում եզրակացությունների արդյունավետության բարձրացման համար [2]:

Գոյություն ունեն ստի ժամանակ ոչ խոսքային վարքի մեկնաբանման տարբեր մոտեցումներ՝ 1) հուզական մոտեցում, 2) բովանդակության բարդության վրա հիմնված մոտեցում, 3) վարքի վերահսկմանն առնչվող մոտեցում (Ֆրայ, 2005):

Հուզական մոտեցումը պայմանավորված է նրանով, որ կեղծ տեղեկատվության գիտակցված հաղորդակցումը հանգեցնում է վախի և մեղքի զգացողության, հուզականության բարձրացման: Հուզականության բարձրացումը, ըստ Օ. Ֆրայի, ենթադրում է շարժողական հակազդումների աճ: Ճանաչողական (կոգնիտիվ) և վարքային մոտեցումները ենթադրում է շարժումների նվազում ստի արտաբերման ժամանակ: Կոգնիտիվ մոտեցումը հիմնված է այն ենթադրության վրա, որ սուտը ճանաչողական բարդ խնդիր է, որի լուծման ժամանակ հնարավոր են անհատականորեն պայմանավորված չգիտակցված շարժողական հակազդումներ: Ոչ խոսքային վարքի մեկնաբանումը երրորդ մոտեցման համատեքստում ենթադրում է, որ ստախոսները, վախենալով հույզերի դրսևորումից, որոնք կարող են նրանց մատնել, ճնշում են դրանք: Նշված մոտեցումները բացատրում են վարքի տարբեր դրսևորումները կեղծ հաղորդագրությունների արտաբերման ժամանակ [5]:

Այսպես, «Մարդու հուզական վիճակի միմիկ ինդիկատորների հոգեբանական գնահատականը մասնագիտացված ծրագրային ապահովման կիրառմամբ դատահոգեբանական փորձաքննություն (ԴՀՓ) անցկացնելիս» ծրագրի շրջանակներում անցկացվել է տեսաձայնագրությունների վերլուծություն, որն իրականացվել է «The Observer XT 12» ծրագրային համալիրի օգնությամբ, որը թույլ է տվել հետազոտողին դիտման բոլոր փուլերի հաջորդական իրականացման շնորհիվ մեկ համակարգի շրջանակներում ձևավորել սկզբունքորեն մի շարք կարևոր մեթոդական գործընթացներ և կազմել դիտման ստանդարտիզացված արձանագրություն կիսամեքենայացված ռեժիմով՝ ստացված արդյունքների հետագա վիզուալացմամբ (Գուսև, Ենգալիչև, Եմելյանովա, 2016): Վերլուծության ընթացքում կիրառվել է շարունակական ապրոբացիայի տեխնոլոգիան, ինչը թույլ է տվել վերլուծել յուրաքանչյուր գործողությունը նրա տևողության, ինտերվալության տեսանկյունից, ինչպես նաև նրա հաջորդականության և այլ գործողությունների համադրությամբ [3,4]:

Կիրառելով «The Observer XT 12» գործառական հնարավորությունները կողավորման սխեմայում՝ հետազոտողի կողմից ստեղծվել են մի շարք տարրեր, որոնցով և իրականացվել է հետագա աշխատանքը: Այդ տարրերին են վերաբերում հետազոտվողի ոչ խոսքային գործողությունները: Տեսաձայնագրությունների վերլուծության ընթացքում «The Observer XT 12» օգնությամբ կազմվել է դիտման էլեկտրոնային արձանագրություն, որում գրառվել են փորձարկվողի ոչ խոսքային գործողությունները (դիտման արդյունքի ընդգծված տարրեր): Փորձաքննության արձանագրությունների վերլուծությունը թույլ է տվել առանձնացնել ժեստերի այնպիսի կատեգորիաներ, ինչպիսիք են՝ «վազող հայացքը», ակամա շարժումներ՝ ինքնամանիպուլյացիայի տեսքով, որոնք մեծ քանակությամբ արտահայտվում են գլխի մազերի, քիթի, աչքերի, ականջների, ոտքերի կոճերի, դաստակների քորելով, ձեռքի մատների ոչ գործառական շարժումներով դաստակի համեմատաբար անշարժության դեպ-

քում, սպեցիֆիկ հոգեֆիզիոլոգիական ժեստեր (թքի կուլ տալը, շրթունքները լիզելը): Ժեստերի տվյալ կատեգորիաները հետազոտվողի կողմից հաղորդվող տեղեկատվության անհուսալիության հոգեբանական նշաններ են [5]:

Հետազոտության վերջնական փուլում Լ. Ն. Սոբչիկի անհատական-տիպաբանական հարցարանի կիրառմամբ գնահատվել են հետազոտվողների անհատական-տիպաբանական հատկությունները: Համաձայն հետազոտության այդ փուլի արդյունքների՝ առանձնացվել է հետազոտվողների 3 խումբ՝ թույլ, ուժեղ և խառը կոնստիտուցիոնալ տիպով: Թույլ կոնստիտուցիոնալ տիպին բնորոշ են բարձր կասկածամտությունը, վախկոտությունը, ամոթխածությունը և անբավարար շփվողականությունը: Ուժեղ կոնստիտուցիոնալ տիպին հատուկ են՝ սթրեսի նկատմամբ կայունությունը, էզոցենտրիզմը, հակումը ինքնահաստատման ազդեցիվ ձևին՝ հակառակ մյուսների շահերի, նրանք չափազանց շփվող են, շրջապատող միջավայրի ճնշման նկատմամբ ոչ զգայուն, ազատ վարքի մեջ, ձգտում են զբաղեցնել լիդերական դիրքեր: Խառը կոնստիտուցիոնալ տիպին բնորոշ են չափավոր շփվողականությունը, ինքնաիրականացման միտումների առկայությունը, զգացմունքային արձագանքը շրջապատող միջավայրի ճնշմանը, սակայն հիմնականում սթրեսի նկատմամբ կայուն են [5, 6]:

Տեսաձայնագրությունների արձանագրությունների վերլուծությունը թույլ է տվել սահմանել հետևյալը.

ա. ուժեղ տիպի կոնստիտուցիոնալ կառուցվածքով փորձարկվողներին բնորոշ են դաստակների որոշ անշարժության դեպքում մատների ոչ գործառական շարժումները, որոնք բնութագրվում են բութ մատներով դաստակների շոյելով կամ մատերի՝ բռունցքի մեջ սեղմմամբ,

բ. թույլ տիպի կոնստիտուցիոնալ կառուցվածքով փորձարկվողներին հատուկ են առանձնահատուկ հոգեֆիզիոլոգիական ժեստեր (թուք կուլ տալը, շրթունքների լպստումը), ակամա շարժումներ՝ ինքնամանիպուլյացիայի տեսքով, որոնք մեծ քանակությամբ դրսևորվում են գլխի մազերը, քիթը, աչքերը, ականջները, ոտքերի կոճերը, դաստակները քորելով,

գ. խառը տիպին բնորոշ են և՛ մեկը, և՛ մյուսը՝ մոտավոր հավասար հարաբերակցությամբ:

Կատարված հետազոտության արդյունքները ցույց են տալիս, որ ճշմարիտ կամ կեղծ տեղեկատվության տրամադրման դեպքում հետազոտվողները կիրառում են տարբեր ժեստիկուլյացիաներ. ճշմարտացի արտահայտությունները ուղեկցվել են ժեստ-իլյուստրատորներով (անկախ հետազոտվողի անհատական - տիպաբանական առանձնահատկություններից) այն դեպքում, երբ կեղծ տեղեկատվության հաղորդման դեպքում ուժեղ կոնստիտուցիոնալ կառուցվածքով անձինք կիրառել են ոչ գործառական շարժումներ, իսկ թույլ կոնստիտուցիոնալ կառուցվածքով անձինք՝ ժեստեր-մանիպուլյացիաներ:

Այսպիսով, կատարված էմպիրիկ հետազոտությունների արդյունքները, որոնք անցկացվել են վերը նշված ծրագրի սահմաններում, հանգեցրել են հետևյալ եզրա-

հանգումների. մարդու ոչ խոսքային ակտիվությունը սահմանվում է մի շարք գործոններով՝ արտաքին խթանի, մշակույթի և ոչ խոսքային ակտիվության ընդհանուր առանձնահատկությունների, ինչպես նաև հոգեբանական առանձնահատկությունների, այդ թվում՝ անձի անհատական- տիպաբանական առանձնահատկությունների: Միջինացված մոդելների կիրառումը անհատական դեպքերի վերլուծության համար կարող է հանգեցնել սխալ եզրակացությունների: Հուզական հակազդեցությունների ոչ խոսքային դրսևորումները չեն նույնականացնում հուզական վիճակների միանշանակ բովանդակությունը: Միևնույն ոչ խոսքային դրսևորումներին կարող են ուղեկցել հուզական տարբեր հակազդումներ, իրավական նշանակություն ունեցող իրավիճակներում մարդու վարքի հոգեբանական վերլուծության ճշգրտության բարձրացման խնդրի լուծման համար կարևոր է վերլուծել ոչ միայն հուզական հակազդումը, այլև խթանների (հարցերի) ճանաչողական սուբյեկտիվ բարդությունը:

Կատարված հետազոտությունը փաստում է հարցազրույցի ընթացքում ոչ խոսքային դրսևորումների դիտման արդյունքների, եզրակացությունների ճշգրտության բարձրացման համար, այդ թվում՝ դատահոգեբանական փորձաքննության անցկացման ժամանակ խիստ ֆորմալիզացված և քիչ ֆորմալիզացված հոգեբանական ախտորոշիչ մեթոդների համադրման անհրաժեշտության մասին: Ժեստիկուլյացիայում փոփոխությունների բացահայտումը թույլ է տալիս ամրագրել բանախոսի հուզական վերաբերմունքի դինամիկան իր կողմից հաղորդվող տեղեկատվության վերաբերյալ, ինչը, իր հերթին, նրա հուսալիության աստիճանի ինդիկատոր է: Ստացված արդյունքն ունի գործնական կարևոր նշանակություն իրավական նշանակություն ունեցող իրավիճակում մարդկանց վարքի հոգեբանական վերլուծության համար, բացի դրանից՝ դրա կիրառումը կարող է նպաստել հանցագործության ժամանակ լրացուցիչ հանգամանքների բացահայտմանը, էականորեն բարձրացնել նրանց բացահայտման արդյունավետությունը քննչական և դատական պրակտիկայում:

### Գրականություն

1. **Ենգալիչև Վ.Ֆ., Ղազարյան Գ. Հ.** Արդի հոգեբանություն գիտական հանդես, «Տեսական և կիրառական հոգեբանության արդի հիմնախնդիրները» VI միջազգային գիտաժողովի նյութեր, էջ 72-76:
2. **Багмет А.М., Гусев А.Н., Енгальчев В.Ф., Кравцова Г.К., Седин В.И., Холопова Е.Н.** Методика исследования коммуникативного поведения с целью выявления психологических признаков искажения сообщаемой информации (по видеозаписям процессуальных и иных действий): научно-практическое пособие. М.: Московская академия СК России, ФГБУ ГНЦ ФМБЦ им. А. И. Бурназяна ФМБА России, 2018. 192 с.
3. **Гусев А.Н., Енгальчев, В.Ф., Захарова Н.А.** Компьютерные технологии оценки голоса и лицевых экспрессий в анализе аудио- и видеоматериалов // Армянский журнал психического здоровья: Актуальные вопросы судебно-психологической экспертизы. 2018. № 1. 2018 (9). С. 66–70. (0,2/0,1 п.л.).

4. **Гусев А.Н., Енгальчев В.Ф., Захарова Н.А.** Современные тренды в использовании программно-аппаратных средств при оценке психоэмоционального состояния человека // Аппаратные средства в психологической подготовке: Материалы межрегиональной научно-практической конференции психологов силовых структур «Научно-методические аспекты использования программно-аппаратных средств и тренажеров в психологической подготовке военнослужащих» (Москва, 25 октября 2017 г.) / под ред. **А.Г. Караяни, С.И. Данилова.** 2018. С. 110-117.
5. **Енгальчев В.Ф., Хавыло, А.В., Леонова, Е.В., Даньшин, В.В., Еремина, И.И., Никуличева, Е.О.** Мимические индикаторы когнитивной нагрузки и их оценка по видеозаписи при производстве СПЭ//Армянский журнал психического здоровья: Актуальные вопросы судебно-психологической экспертизы. 2018. № 1. 2018 (9). С.73–77.
6. **Elena V. Leonova, Vali F. Engalychev, Alexey V. Khavylo, Danshin V, Nikulicheva K.** Psychological Assessment of Mimic Indicators of Person's Emotional State Using Specialized Software // 29th International Congress of Applied Psychology (ICAP-2018, 26-30 June), Montreal, Canada.

**ПРЕДВАРИТЕЛЬНЫЕ РЕЗУЛЬТАТЫ ЭКСПЕРИМЕНТАЛЬНОГО  
ИССЛЕДОВАНИЯ И ПСИХОЛОГИЧЕСКОГО АНАЛИЗА МИМИЧЕСКИХ  
РЕАКЦИЙ ЧЕЛОВЕКА С ИСПОЛЬЗОВАНИЕМ СПЕЦИАЛИЗИРОВАННОГО  
ПРОГРАММНОГО ОБЕСПЕЧЕНИЯ**

*Енгальчев В.Ф. Леонова Е.В., Хавыло А.В. (Калужский государственный  
университет им. К. Э. Циолковского, Калуга, Россия),  
Казарян Г.А. (ЕГМУ, Ереван, Армения)*

В работе оперативно - следственной и судебной практики, в последнее время всё более востребованными становятся технологии диагностики психического состояния человека по его поведению, зафиксированному на видеозаписи. Невербальная активность человека определяется множеством факторов: наряду с факторами внешнего стимула, культуры и общей специфики невербальной активности важную роль играют психологические особенности, в том числе индивидуально-типологические особенности личности, которые необходимо учитывать для повышения надежности выводов в процессе анализа наблюдаемого поведения. Существуют различные подходы к трактовке невербального поведения во время лжи: 1) эмоциональный подход; 2) подход, основанный на сложности содержания; 3) подход, связанный с контролем поведения. Для решения задачи повышения точности психологического анализа поведения людей в юридически значимых ситуациях представляется важным анализировать не просто эмоциональную

реакцию, а ее соотнесенность с субъективно значимой когнитивной нагруженностью стимулов (вопросов).

*Ключевые слова: невербальное поведение, мимическая активность, психологические особенности, когнитивная нагруженность стимулов.*

### **PRELIMINARY RESULTS OF EXPERIMENTAL RESEARCH AND PSYCHOLOGICAL ANALYSIS OF MIMIC HUMAN REACTIONS USING SPECIALIZED SOFTWARE**

*Engalychev V. F., Leonova V. E., Khavylo A.V. (Kaluga State University after K.E. Tsiolkovsky, Kaluga, Russia),  
Ghazaryan G. H. (YSMU, Yerevan, Armenia)*

Recently the technologies of diagnosing the mental state of a person according to his behavior recorded on video have become more and more in demand in the work of operational - investigative and forensic practice. Non-verbal activity of a person is determined by many factors: along with factors of external stimulus, culture and general specificity of non-verbal activity, psychological traits play an important role, including individual-typological personality particularities that must be taken into account in order to increase the reliability of conclusions in the analysis of observed behavior. There are various approaches to the interpretation of nonverbal behavior while a person is lying: 1) an emotional approach; 2) an approach based on the complexity of the content; 3) a behavioral control approach. To solve the problems of increasing the accuracy of psychological analysis of people's behavior in legally relevant situations, it is important to analyze not just the emotional reaction, but its correlation with the subjectively significant cognitive load of incentives (questions).

**Keywords:** *non-verbal behavior, non-verbal activity, psychological particularities, cognitive load of incentives.*